

շապիկները վերմակը և ինչ ուրիշներին նույն-
րեւ, այդ նուէրներին միջոցաւ հետադարձեալ
վարակուում են և ուրիշ ընտանիքներ։ Այս-
պիսի ընծաներ չպէտք է նաեւ ընդունել։
Պէտք է միշտ միտը բերել որ ինքն իրեն
պահպանին Աստուած էլ կպահպի։*

Բ. Մ.

ՄԱՆՐԱԼՈՒՐԲ

Բուռնի հիւանդոսը։ — Ինչպէս յայտնի է
թանկագին քարերը ենթակայ են բազմաթիւ հի-
ւանդութիւններին, որոնք արտայայտուում են նը-
րանով, որ քարերը կորցնում են իրենց փայլը
կամ աստիճանաբար փոխում են իրենց սկզբնական
գոյնը, երբ երկար ժամանակ ենթարկուում են
արեւի ճառագայթների ազդեցութեանը։ Այս փո-
փոխութիւններին ամենից պակաս ենթակայ են
զմրուկաւր, շափիւզան (сапфиръ) և սուտակը (ру-
бинъ), որոնք երկար ժամանակ առանց փոփոխու-
թեան պահպանում են իրենց փայլն ու ցոլքը։
Վաղայն այս վերջիններից էլ սուտակը, թէեւ քիչ,
բայց այնուամենայնիւ փոխում է իւր գոյնը,
ինչպէս այդ երեւաց Պարիզում կատարուած փոր-
ձերից։ Երկու հասարակ մեծութեամբ սուտակնե-
րից մէկը թողին ի ցոյց ակնաւաճառի խանութի
պատուհանում երկու տարի և յետոյ երբ հա-
մեմատեցին նրան երկրորդ սուտակի հետ, որ չէր
ենթարկուել արեւի անընդհատ ազդեցութեան և որ
առաջ բոլորովին նոյն գոյնն ունէր ինչ որ առաջինը,
երեւաց որ առաջինը նկատելի կերպով գոյնը ձգել
է։ Յատկապէս վնասակար ազդեցութիւն է անում
լոյսը տոպազի և նոնաքարի (гранатъ) վերայ։
Առաջինը գոյնը գցում է իսկ երկրորդը ընդհակա-
ռակը աւելի մութ գոյն է ստանում և երկուսն էլ
կորցնում են իրենց փայլը։

Ակնաւաճառները ամենազգայուն քարը օպալն
են համարում։ Սառսիկ զգայնութեամբ յայտնի է
նաեւ մարգարիտը։ Նա յաճախ իւր փայլը կորցնում
է, եթէ յղկելու միջոցին վարպետի ձեռքից քրտին-
քի մի կաթիլ ընկնում է վերան։ Մարգարտի վե-
րայ փառ է ազդում նաեւ կրակի մերձաւորութիւնը։
Ամենամուր և թանկագին քարերից մէկն է ալ-
մասը բայց նա ևս տաքութեան վերաբերմամբ շատ

զգայուն է։ Կրակի ազդեցութիւնից նա կարող է
ծաքել։

Սառսիկ փոփոխականութեամբ աչքի է ընկ-
նում նաեւ փրուզան, որի նուրբ-վարդագոյն փայլը
փչանում է յաճախ և քարը ծածկուում է բնե-
րով։ Նորից մաքրելու համար շատ անգամ փրուզ-
ան մի քանի շաբաթով թաղում են սեւահողի
մէջ։ Իսկ միջին Ասիայի և Վովկասի բնակիչները
քարի գոյնը վերականգնելու համար հնգուհաւերին
կլանել են տալիս և այնուհետեւ գտնում։

— Օգոստոսի 16-ին ընկած օգաքարը այժմ զբո-
նուում է Ս. Ալադիմիրի համալսարանի մի ուսանողի
մօտ, որ պէտք է հասցնէ Կիւն։ Նա խնայպէս փը-
շքրուած օգաքարի մի կտոր է։ Գտնուել է Չենի-
գովինան Լեօնովկա գիւղի մօտերը մի գիւղացու
միջոցով։ Աւերջինս քիչ էր մնացել մահանար ըն-
կած օգաքարից, բայց խնայքի գիւղացին, չնայելով
որ բոլորովին չէր մէլ էր, մի փայտի կտոր է տնկում
ընկած տեղը, որով և հետեւեալ օրը գտնում է
օգաքարը փոքր ինչ խորութեան մէջ։ Օգաքարը
գորշագոյն օրձաքարիտի մի առանձին տեսակ է։

Լեօնովկա գիւղից 5 վ. հեռաւորութեամբ
գտնուել է և նոյն օգաքարի մի աւելի փոքր կտորը։

Chronique Medicale շատ հետաքրքրական տե-
ղեկութիւն է տալիս Գուստաւ Լը-Բօնի (Le Bon)
Սաղի-Կարնոյին ընծայած Հնդկական մի փոքրիկ
արձանիկի մասին։

Կարնօն գիւղ ևս եղեմտից նախարար էր և
չէր էլ մտածում նախագահութեան համար, երբ
Լը-Բօն վերադառնալով Հնդկաստանից՝ նորան ըն-
ծայ բերեց մի հիանալի արձանիկ։

Այս արձանիկի մասին մի աւանդութիւն
կայ, ասաց Le-Bon իր բարեկամին։— Նա դարերով
Կաթուրան հարստութեան սեփականութիւն է եղել։
Ինձ ընծայող բաջան անաթատճառ կամենում էր ա-
ղատուել նորանից։ Նա խորհրդաւոր զօրութիւն
ունի։ Իւր տան անգամներից մէկը, որին էր պատ-
կանում արձանիկը, հասնում է երկրի բարձրագոյն
իշխանութեան, բայց շուտով անբնական մահուամբ
վախճանում է, ուստի ինձ ընծայող բաջան թէեւ
շատ էր կամենում իւր երկիրը կառավարել, բայց
չէր ցանկանում սպանուել, ուստի և իւր շարա-
գուշակ արձանիկից մի կերպ կամենալով ազատուել
ընծայեց ինձ՝ նախապէս պատմելով նորա հետ կա-
պուած աւանդութիւնը։ Արձանիկի արտակարգ գե-
ղեցկութիւնը և տարօրինակ համալը գրաւեցին
ինձ և ևս բերեցի հետս։

Առէք, — աւելացրեց Le-Bon — եթէ երկիւղ
չունիք ոչ փառքից և ոչ տարօրինակ մահուանից։

Սաղի-Կարնօն, որ սիրահար էր ամէն տարօ-
րինակ և գեղեցիկ իրերի, ուրախութեամբ ընդունեց
այդ ինքնուրոյն ընծան։

* Քարգմ. Издание Комиссiи по распроста-
влению илленестическихъ знанiй въ народѣ. Изд. 3-е
(Եղովրդի միջ առողջապահական գիտելիքներ արածող
յանմանողի Գ. հրատ.)

Ոչ որ չէր ենթադրում որ Վերսայլի հետեւեալ ընտրութեան հետեանքը ժուլէթի հրաժարականը և Սադի-Վարնոյի ընտրութիւնը կլինի, Բրիկան Լը-Բոն նոր նախագահի կնոջից ստացաւ հետեւեալ տոմսը. «Այս ամենը արձանիկի ազդեցութիւնն էր»:

Վարնոյն է արդեօք և նոյն ազդեցութեամբ բացառել եօթ տարի յետոյ հասարակապետութեան նախագահի բռնի մահացումը՝ շրջապատուած նախարարներով, վարչութեան անդամներով և հազարաւոր ժողովրդի կեցցէների ժամանակ, Ի՞նչ գաղտնի գործութիւն էր պարունակում իւր մէջ Ասիայի խորքերից ազատութեան հայրենիքը փոխադրած այգիքարի կտորը:

Վարնոյի մահից յետոյ արձանիկը մոռացուեցաւ: Բայց Տիկ. Վարնոյի մահից յետոյ, նորա որդիքը, թողած կտակի մէջ, կարգադրեց մօր համոզելը աղաչանքը՝ աղատուել անպատճառ չարագուշակ արձանիկ—կուռքից: Նախագահի ամուսինը յայտնի էր ամենքին իւր խոր փիլիսոփայական խելքով և շատ հեռու էր ամեն տեսակ նախապաշարումներից և չնչհաւատութիւնից, բայց նորան ևս ըստ երևոյթիւն, ապշեցրեց այն զարմանալի ներքին կապը, որ կար ամուսնու մահուան և մնայլ աւանդութեան մէջ:

* *

Ամերիկացի միլիարդատէր Ստեփան Մերչենդ (Marchand) Լոնդոնի մի յայտնի գեղարուեստագիտական տան պատուիրել է իւր ննջարանի արդու դարդի պարագաները: Այդ պատուէրը նստեց նորան մօտ 2 միլ. ր. բայց դրա փոխարէն նա աշխարհիս մէջ ամենահիանալի և շքեղ ննջարաններից առաջինն ունեցաւ: Ննջարանը ձուածեի կերպ ունի, 76 ոտնաչափ երկարութեամբ և 22 ոտնաչափ լայնութեամբ: Պատերն ամբողջապէս ծածկուած են սպիտակ յախճապակիով, ոսկէքանդակ և զարմանալի արուեստի ձեքերով Լուզովիկոս XY-ի ոճով: Պատերն ու ցեքերը (карнизы) արժեն 128 հազար ր. միայն թաւշի տուած է 21,700 ր. առաստաղը ծածկուած է Փարիզի ամենաաղջնակարգ նկարիչների և քանդակագործների արտագրութեամբ, որ նստել է 38,800 ր. փողքը և տան վարագույրները Զենովայի հիանալի թաւշից են և արժէ միայն 10,400 ր. լուսամուտների վարագոյրները Բրիստօլի ամենանուրբ ժանեակից են, սպիտակ թաւշով շրջակար, որ նստել է 13,500 ր. ամբողջ սենեակի մեծութեամբ մի գորգ, ծիրանեգոյն, հրաշալի ալսմենստիւր, ձեռագործ՝ 35000 ր.:

Սենեակի լամպից աչքի ընկնող զարդարանքն է մահճակալը և կարասին: Մահճակալն արժէ միայն 400,000 ր. նա ուն փայտից է և գեղարուեստական քանդակի մի տիպար, փղոսկրէ և ոսկէ բանուածքի զարդերով ազուցած: Ամերիկացի Կրեստսի քմա-

հաճոյքը կատարող Լոնդոնի վաճառատունը տալու էր մահճակալը Փարիզում պատրաստել տալու էր 2 1/2 տարի շարունակ աշխատել են նորա վրայ ամենայայտնի վարպետներ: Մահճակալի սնարի զարգի համար կարևոր էր շտեմնուած մեծութեան փղոսկրի կտոր. որովհետև այդպիսի կտոր չէր գտնուում վաճառատունը խնդրեց Մերչենդից համաձայնել մի քիչ փոքրացնել այդ զարդի չափը: Բայց հարուստ եանկին խել խել չկամեցաւ, այլ հրամայեց դրամ չխնայել և դնել հարկաւոր չափով փղոսկրը: Եօթն ամիս փնտռելուց յետոյ հաղիւ Եւամբրի (Աֆրիկայ) գիւղում ձեռք բերին փնտռածը՝ վճարելով 40,000 ր. մահճի հովանին գեղարուեստական քանդակի և վերջին խօսքն է, ծածկուած շքեղ մետաքսեայ ծիրանեգոյն կտորով, Զգեստների պահարանը սև փայտից է, փղոսկրէ և ոսկէ վազուցուածքով, արժէ 35000 ր. նոյն ոճով է և արդուդարդի սեղանը, Վենետիկի հայելով՝ 124,000 ր. լուսարանը—75,000 ր.:

Աթոռները ծախարակած են փղոսկրից, ոսկրէ բանուացքներով, [խւաքանչիւրը] 15,000 ր. մեծ հայելին (trumeau) 8000 ր.: վառարանի զարդերն ու հայելին 12,00 ր. նաղանքի սրահը (уборная) նստել է 400,000 ր. արդուդարդի պարագաները ամբողջապէս ոսկուց են և արժեն 250000 ր.:

* *

Լոնդոնում ամեն տարի գուրս է գալիս մի տարեցոյց (almanach), որ նշանակում է նոյն տարուայ նշանաւոր դէպքերը, Տարեցոյցը կազմում է Մուր (Moor) անունով մի աստղագէտ, Անցեալ 99 թ. ամառը դեռ ևս նա գուշակել էր 1900 թ. համար—մի շարք սոսկալի պատերազմներ, մի նշանաւոր արքայի մահ և Հնդկաստանում աւերիչ սով: Ինչպէս յայտնի է բոլորն էլ կատարուել են:

Այս օրերս գուրս է եկել 1901 թ. տարեցոյցը: Մուրը այս անգամ իւր գուշակութիւնների ամիսներն էլ է գրել:

Այսպէս՝ յունուարին ֆրանսիայում քաղաքական մեծ յեղափոխութիւն կլինի և հասարակապետութիւնը մեծ փառնորդ կենթարկուի Փետր. և մարտին հեռաւոր Արեւելքում նշանաւոր անցքեր կանցնեն, իսկ Հնդկաստանում մաքերի չփոթութիւն կսկսուի: մայիսին Իրլանդիայում ապստամբութիւն կծագի, յունիսին անիշխանականները նորից ընդհանուր ուշադրութիւնը կդարձնեն իրենց վրայ, յուլիսին ամենուրեք զարհուրելի դժբախտութիւններ կպատահեն և Մուրը խորհուրդ է տալիս յուլիսին ամենևին չձանապարհորդել, սեպտեմբերին Հնդկաստանի ժողովուրդը նորից սովամահ կլինի, հոկտեմբերին զերմիշների ապստամբութիւնը կրոնկուի, նոյեմբերին հոլանդական թագաւորութիւնը պատեգաւոր քաղաքական զիրք կբռնէ և մեծ դժուարութեամբ պետութիւնները

կազմաւորեն այդ միջնադէպից, զեկզեմբերը նշա-
նաւոր կլինի մի քանի ապստամբութիւններով,
խռովութիւններով և բանւորական գործադուլներով
աշխարհիս զանազան մասերում:

* *

Թէ յի տունի մասին Զինատանում գոյու-
թիւն ունի հետեւեալ ամենութիւնը, Հատ հին
ժամանակները Զինատանում ապրում էր մի իմաս-
տուն, որ իւր ամբողջ կեանքը նուիրել էր աստուա-
ծային ճշմարտութիւնների իմաստասիրութեան:
Երբեմն խիստ յոգնածութիւնը փակում էր նորա
կոպերը, նորան շատ մեծ սրտնեղութիւն էր պատ-
ճառում այդ հանգամանքը, որովհետեւ քունը խլում
էր նորա թանգագին ժամերը: Մի անգամ կամ-
նալով պատժել անհնազանդ մարմինը, նա կտրեց
իւր կոպերը և դէն ձգեց: Այդ կոպերից խելոյն
բուսաւ մի թուփ, որի տերեւներից պտտաբստեց
թէյը—մի խմիչք, որ քուն է փակցնում:

* *

Ողորմած շուն.—Նիւ-Եօրքում մի թանգա-
գին շուն կայ՝ Ժիպ անունով: Ամէն օր նորան կա-
րելի է տեսնել այն փողոցներում, ուր ամենից ա-
ւելի ժողովրդի շարժում է լինում և որտեղ կա-
րելի է յուսալ թէ ողորմութիւն կտան: Ժիպն աշ-
խարհիս ամենամեծ ժողովարարն է: Նորա մէջքին մի
փոքրիկ արկղ է կապած, այս վերնագրով «Մանկա-
կան հիւանդանոցի» խեղճ հիւանդներին ողորմե-
ցէք: Ըունը մօտենում է և կանգնում անցորդի
առաջ և շատ յաճախ շան այդ խնդիրն աւելի լսե-
լի է լինում քան մարդկանցը: Վազզկելով
Նիւ-Եօրքի բանուկ փողոցների մեծ մասը, Ժիպը
հենց որ զգում է թէ մէջքի արկղը ծանրացաւ,
խելոյն մօտում է քաղաքի բազմաթիւ դրամատնե-
րի բաժանմունքներից մէկը, զանձապահը արկղը
զաղարկում է և մուտք գրում յօգուտ «Մանուկ-
ների հիւանդանոցի», իսկ ստացած գումարի տպա-
հոյագիրը ձգում արկղի մէջ: Ըունը խելոյն տուն
է վազում, ապահովագիրը յանձնում և իւր համեղ
ու առատ ճաշը վայելում:

Մօտ ժամանակներս Ժիպը կատարեց մի տար-
օրինակ յօբեւեան: Վատարում էր նորա 7 ամեայ
զօրծնէութեան տարեդարձը և այդ քան ժամանակ
նա հաւաքել էր հիւանդ մանուկների համար...
50 հազար ռուբլի:



ՅԱԽԵԼՈՒԱԾ

ԵՐԵՎԱՆԻ ՉԵՌԱԳԻՐ ՄԱՏԵԱՆՆԵՐ

ԵՒ

ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ.

(1810—31).

(Նախնականութիւն *)

Միութեան խնդրին յարակից ընթանում էր
Հայր Միքայէլ վրդ. Զամչեանի «Վահան հաւատոյ»,
հեղինակութեան մասին վէճը: «Վահան հաւա-
տոյ»-ի ընդարձակ վերնագիրն է.

«Վահան հաւատոյ ուղղափառութեան Հայոց,
Հարադրեալ ուղիղ քննութեամբ և աստուա-
ծարանական ոճով, անպատրուակ դիտողութեամբ և
բացայայտ եղբորք. աշխատասիրութեամբ Տեառն
Հօր Միքայէլ վրդ.-ի Զամչեան 1776»:

«Վկայեալ յաղաթս ուղղափառութեան սորին
ըստ ներագնին քննութեան Ս. Ժողովոյն Հոովմայ,
որ կոչի Տարածութիւն Հաւատոյ և վերնագրական
գրոշմիւ սրբական եօթներորդ պապին Պիոսի քա-
հանայապետի, Համառօտեալ ի բուն սկզբնագիր
մատենէն ծաղկաբաղ հաւարմամբ զխաւոր խնդրոց,
նորին շարագրութեամբ իսկ հեղինակին, առանց
փոփոխելոյ և ոչ բառ մի անգամ, յումեմնէ ճըշ-
մարտասիրէ»:

Վահան Հաւատոյի մեզ յայտնի ընդօրինա-
կութիւններն են.

ա. Արիստակէս Արքեպիսկոպոս Գաւթեանինը
Հահումթունեանի օրինակից 1860 թուին նոյեմ-
բեր 1-ին արտագրուած.

բ. Վարսում վերարնակող Մինաս քահանայ
Տէր Պետրոսեանինը՝ Արիստակէս Արքեպիսկոպոսի յիշեալ
օրինակից 1866 թուին փետրուարի 25-ին արտա-
գրուած.

գ. Վեհափառ Տ. Տ. Մկրտիչ Արքեպիսկոպոսինը
Հայրապետինը, գրուած զպիւր Յովակիմ ձեռքով
1825 թուին մարտի 26-ին և նորին Վեհափառու-
թիւնից նուիրուած Մայր Աթոռի մատենադարանին:

Մեծ հետաքրքրութիւն է ունեցել Հ. Միքայէլ
վրդ. Զամչեանին վերագրուած Վահան Արշարու-
նու նամակը՝ Հայաստանեայց եկեղեցու ջատագո-
ւութեան համար: Միխիմարեանը, յանձին Հայր
Ալիշանի, ոգի ի բուն պնդում էին, որ այդ նամակը
Զամչեանինը չէ. բայց նոյն միարանութիւնից
անջատուած և համարեա ժամանակակից յայտ-
նի Գաբրիէլ վրդ. Այվազեանի, վերջը Արքեպիս-
կոպոս հրատարակած Մասեաց Աղանին հաստա-
տում է որ Վահան Արշարունին է նոյն ինքն Մի-